*9-10 դասարան*

*3 միավոր գնահատվող առաջադրանքներ*

1) Տարբերակներից ո՞րն է ավելորդ:

Ա) բաժակ
Բ) ստահակ
Գ) սկահակ
Դ) ըմպանակ

2) Տարբերակներից ո՞րն է կապակցում մազ և սեգ բառերը՝ լինելով մեկի հոմանիշը, մյուսի՝ գրաշրջումը (այսինքն՝ կազմված է նրա բոլոր տառերով):

Ա) մեգ
Բ) սեզ
Գ) սեր
Դ) գես

3) Տարբերակների բառերն ունեն մի հետաքրքիր օրինաչափություն՝ բացի մեկից: Ո՞րն է այդ բառը:

Ա) կապ
Բ) ջուր
Գ) վաղ
Դ) փակ

4) Պատասխանի տարբերակների բառերից ո՞րն է կազմությամբ տարբերվում մյուսներից:
Ա) հացաման
Բ) պատգամ
Դ) խաչքար
Ե) սեղանատամ

Վերահրատարակումը միայն "Քոնթեստս ԼԼԸ"-ի թույլտվությամբ

5) Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը:

Բոժոժ – շերամի
Խեցի – ոստրեի
Պատիճ – հունդի
Խճեճ - բամբակի



Ա) պատյան
Բ) պատճեն
Գ) միջուկ
Դ) հատիկ

6) Քանդակագործ Ռուբեն Նալբանդյանը ստեղծել է 36 նշանավոր խաչքար, որոնք տեղադրված են Օշականում: Այդ խաչքարերը նվիրված են՝

Ա) Ավարայրի ճակատամարտում նահատակված զորավարներին
Բ) նահատակված կույսերին
Գ) հայոց նշանավոր տոներին
Դ) հայոց տառերին

7) ՐՀ   զույգը ո՞ր «տանն» է հանգրվանում իր զույգի հետ:

Ա) խոնա
Բ) աշխա
Գ) աամաանք
Դ) նի

8) Ո՞ր հայ գրողի ազգանունն է «փետրավոր»:

Ա) Հովհաննես Շիրազ
Բ) Գրիգոր Զոհրապ
Գ) Դանիել Վարուժան
Դ) Պարույր Սևակ

9) Եթե բառերը բաժանվեն բանակների, ապա ո՞ր բառազույգ(եր)ի բառերը կհայտնվեն միևնույն բանակում:

1) բիրտ - անտաշ
2) երկչոտ - աներկյուղ
3) բուժել - ապաքինել
4) թավ - նոսր
5) գթալ - կարեկցել

Ա) 1; 2
Բ) 4; 5
Գ) 3
Դ) 2; 4

10) Երկար տարիների աշխատանքի արդյունք գյուտս ճանաչում գտավ: Նախորդ նախադասության բառերից մեկում թաքնվել է ճշգրիտ, հավաստի բառերի «ձախլիկ» ընկերը:

Ա) արդյունք
Բ) տարիների
Գ) գյուտս
Դ) ճանաչում

Վերահրատարակումը միայն "Քոնթեստս Լաբ"-ի թույլտվությամբ

## *4 միավոր գնահատվող առաջադրանքներ*

11) Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:




Ա) ցուցում
Բ) ցնցում
Գ) ցանց
Դ) անցում

12) Բերված արտահայտություններից երեքը, որ հաճախ են օգտագործում լրագրողները, մի հատկություն ունեն, որի պատճառով խմբագիրները միշտ ուղղում են դրանք: Տարբերակների արտահայտություններից ո՞րն է զուրկ այդ հատկությունից:

Ա) ապագա կատարելիք
Բ) այդպիսի ձևով
Գ) իրենից ներկայացնում է
Դ) հասարակական կարգ

13) Գտիր բերված տառային ծածկագրի ճիշտ լուծումը:

ԾԱՂԻԿ
\+
ԾԱՂԻԿ
ԳԱՐՈՒՆ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 20179 | | 30179 | | 40179 | | 20176 |
| | + | | + | | + | | + |
| Ա) | 20179 | Բ) | 30179 | Գ) | 40179 | Դ) | 20176 |
| | 40358 | | 60358 | | 80358 | | 40352 |

Վերահրատարակումը միայն "Քոլեջտատու ԼԼԿ"-ի թույլտվությամբ

14) Անգետիկը գրատախտակին գրել էր նշխարի, շնորիք, ապաշխարհել, պատճե, խառնիճաղանչ, զեղչել, ընթերցել, առհամարել, փռփռալ, պարկել բառերը: Գիտունիկը կարդաց և ուղղեց սխալները: Բառերից քանի՞սն էր ճիշտ գրել  Անգետիկը:

*Ա) 4*
*Բ) 5*
*Գ) 6*
*Դ) 7*

15) Ո՞ր կենդանիների խմբի անվանումը կստանաս, եթե ջնջես վանդակի այն տառերը, որոնք կրկնվում են հինգական անգամ:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ե | ն | մ | լ | ա | ի |
| ի | մ | բ | ա | ե | մ |
| կ | ա | ն | ի | ու | ե |
| մ | ն | ի | մ | ե | ի |
| ա | ե | ն | ա | ռ | ն |

Ա) առյուծների
Բ) խոզերի
Գ) այծերի
Դ) կովերի

16) Երեխաներից ո՞վ չի սիրում հրամայել:

*Ա) Տարոն*
*Բ) Էլեն*
*Գ) Գառնիկ*
*Դ) Մարինե*

17) Ո՞վ է պատմում գյուղում անցկացրած ժամանակի մասին:
*Հիանալի է գյուղում. արթնանում ես, հագնվում, դուրս գալիս մաքուր օդի:*

*Ա) խոսողը*
*Բ) խոսակիցը*
*Գ) ինքս*
*Դ) Ընկերս*

18) Ո՞ր թիվը չի տեղադրվի նախադասություններից ոչ մեկում:

*Տիգրան ________________ — ստեղծեց ծովից ծով Հայաստան:*
*Տրդատ ____________________ — նրա օրոք հայերը պետականորեն ընդունեցին քրիստոնեությունը:*
*Աշոտ ______________________ — նրան տվել են Երկաթ մականունը:*
*Արտաշես ————————— — ստացել է Բարեպաշտ պատվանունը:*

Ա) 1-ին
Բ) 2-րդ
Գ) 3-րդ
Դ) 4-րդ

19) Անուշը դասամիջոցին գրատախտակին գրեց ործկալ,այժմէական, խուրց, պախուրծ, հանիպակաց, անստույգ, առընչվել, լվացք, փռփռալ, ալոջ բառերը: Ուսուցչուհին կարդաց և ջնջեց բառերից մի քանիսը: Քանի՞ բառ ջնջեց ուսուցչուհին:

Ա) 7
Բ) 6
Գ) 5
Դ) 4

20) Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:

Ա)բերանը ծուռ մնալ
Բ)երկու բանից հեռու մնալ
Գ)բռան մեջ առնել
Դ)բերանի ծամոն դառնալ




Վերահրատարակումը միայն "Քանգուրու Լաք" -ի թույլտվությամբ

*5 միավոր գնահատվող առաջադրանքներ*

21) Ո՞ր հայ արքան է թաքնվել հայկական քաղաքների շարքում:

Արտաշատ, Հրազդան, Տաշիր, Վանաձոր, Արթիկ

Ա) Տրդատ
Բ) Արշակ
Գ) Մենուա
Դ) Գագիկ

22) Տարբերակներից որո՞ւմ Գիտունիկը սխալ գտավ:

Ա) Սեդան ուզում է, որպեսզի բոլորը գան:
Բ) Դա ոչ թե կեղծիք էր, այլ ակնհայտ սուտ:
Գ) Դուք ոչ թե չկարողացաք, այլ  չուզեցիք օգնել մեզ:
Դ) Գևորգը հաճախում է ոչ միայն ֆուտբոլի, այլև լողի:

23) Կռահիր, թե ինչ օրինաչափությամբ են դասավորված բառերը, և որոշիր, թե տարբերակներից որը կլինի հաջորդը:

*գարուն, ագեվազ, բագին, եղեգնածածկ, կաթոգին*

Ա) նետաձիգ
Բ) պատարագիչ
Գ) հրաշագեղ
Դ) տարագիր

Վերահրատարակումը միայն "Քննական Լար"-ի թույլտվությամբ

24) Պ.Սևակի բանաստեղծության մեջ  բաց թողնված բառերը ո՞ր տարբերակի հականիշներով փոխարինենք, որպեսզի բանաստեղծությունը ճիշտ ստացվի:

Աղաչում եմ
Մի վրդովվեք, եթե ասեն
Փառասերին  հենց  փառասեր,
Ոչ թե --------,
Սրիկային հենց սրիկա
Ոչ թե --------,
Հեռակային  հենց հեռակա,
Ոչ թե --------...

Ա) Խոնարհ, վսեմ, արդի
Բ) Մեծամիտ, վատահամբավ, ժամանակակից
Գ) Արդիական, հեռակա, մեծամիտ
Դ) Բարի, հպարտ, խեղճ

25) Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:

3/3; 30/2; 40/4; 1000/3; 70/4; 20/4; 40/1

Ա) երազանք
Բ) հարազատ
Գ) նպատակ
Դ) տասնյակ

Վերահրապարակումը միայն "Ընթերցանոս Լաբ"-ի թույլտվությամբ

26) Կոտորակագիր կոչվող ծածկագրում մեր այբուբենի յուրաքանչյուր տառին համապատասխանում է մի կոտորակ, որի համարիչում և հայտարարում դրված կետերը որոշակի կապ ունեն տվյալ տառի հետ:

Օրինակ՝



Ի՞նչ է գաղտնագրվել հետևյալ կոտորակագրում.



Ա) Համբերությունը կյանք է:
Բ) Ամեն բանի վերջն է գովելի:
Գ) Վռազողին տղա չի լինի
Դ) Լռությունը ոսկի է:

27) Ո՞ր ժողովրդական առածն է ծածկագրվել թվային շարքում:
1;  2000; 1; 600; 3000; 7; 8; 400; 60; 5; 5000; 4; 1; 2000; 5; 200; 600; 3000; 5; 2000; 4; 7000:

Ա) Ամեն բանի վերջն է գովելի:
Բ) Ամառվա փուշը, ձմեռվա նուշը:
Գ) Աշխարհի շինողն ու քանդողը լեզուն է:
Դ) Ասա՝ ով է ընկերդ, ասեմ՝ ով ես դու:

28) Այդ չարաճճին, հետ-հետ քայլելով, որոշակի օրինաչափությամբ թաքնվել է «ելակ, աղավնի, մատիտ, աշտե, զանգ,  անկյուն, կրիա » բառաշարքում: Ո՞վ կամ ի՞նչ է նա:

Ա) ծովային կենդանի
Բ) Կենդանակերպի նշան
Գ) հեքիաթային հերոս
Դ) բանջարեղեն

29) Երգչախմբում էին 1-10 թվերը: Գրեթե բոլորը երգում էին  «միաձայն»: Ո՞ր տարբերակի թվերն էին կարողանում երգել տարբեր  «ձայներով»:

Ա) 1, 3, 6
Բ) 4, 5, 7
Գ) 1, 7, 8
Դ) 2, 9, 10

30) Տրված տարբերակների բառազույգերը աճպարարական մի հնարքով նորանում են: Ո՞ր տարբերակի բառազույգն է զուրկ այդ շնորհքից:

Ա) խաժ-կեր
Բ) խեթ-հուր
Գ) գամ-ծեգ
Դ) հորթ-թան

Վերահրապարակումը միայն Քենգուրու Լար - ի թույլտվությամբ